Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 327 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել 44-օրյա պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած, Շիրակի մարզում բնակվող զինվորների սոցիալ-տնտեսական վերաինտեգրմանը՝ աշխատանքի և աշխատելու մոտիվացիան խթանելու միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ՝ (Հայաստանի Հանրապետություն, 0010 քաղ. Երևան, Տերյան 1/1, բն. 5, ՀՎՀՀ՝ 01282864):
4.	Ծրագիրը կատարողը	«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ՝ (Հայաստանի Հանրապետություն, 0010 քաղ. Երևան, Տերյան 1/1, բն. 5, ՀՎՀՀ՝ 01282864):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, բնագավառ՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	39,020,872 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզում բնակվող, 44-օրյա պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած զինվորներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի մայիսի 16-ից մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Մասնագիտական կողմնորոշման ճամբար: Ճամբարը նպատակ ունի բացահայտել պատերազմի մասնակիցների երազանքները, դուրս բերել նրանց գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև իրականացնել մասնագիտական կողմնորոշում: Տևողություն՝ 2022 թվականի մայիսի 16-ից մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը: Բյուջե՝ 10,930,000 դրամ: 2. Վերապատրաստման/մասնագիտացման դասընթացներ: Դասընթացների նպատակն է զարգացնել պատերազմի մասնակիցների գիտելիքները և հմտությունները: Տևողություն՝ 2022 թվականի մայիսի 16-ից 2023 թվականի հուլիսի 31-ը:

		Բյուջե՝ 6,000,000 դրամ: Դասընթացները կազմակերպելու նպատակով կներգրավվեն տարբեր մասնագետներ, ուսումնական կենտրոններ և այլ կրթական հաստատություններ: 3. Ինքնազբաղվածության խթանման միջոցառումներ: Այն պատերազմի մասնակիցները, որոնք ցանկություն կհայտնեն հիմնել իրենց սեփական բիզնեսը և զբաղվել ձեռներեցությամբ, Հիմնադրամը նրանց կաջակցի, տրամադրելով բիզնես խորհրդատվություն և անհրաժեշտ գործիքներ/սարքավորումներ՝ սեփական գործը սկսելու համար: Այդ նպատակով կներգրավվեն փորձագետներ, ձեռք կբերվի բիզնեսն իրականացնելու համար անհրաժեշտ գույք/սարքավորում: Տևողություն՝ 2022 թվականի մայիսի 16-ից 2023 թվականի հուլիսի 31-ը: Բյուջե՝ 8,000,000 դրամ: 4. Ծառայություն մատուցողներ: Ծրագրային գործողություններն իրականացնելու համար կներգրավվեն համապատասխան մասնագետներ: Հոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով կներգրավվեն նաև հոգեբաններ: Տևողություն՝ 2022 թվականի մայիսի 16-ից 2023 թվականի հուլիսի 31-ը: Բյուջե՝ 14,090,872 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում (գիշերակաց, սնունդ, աշխատանքային տարածք) – 9,000,000 դրամ. 2. Ուղևորափոխադրման ծառայությունների ձեռքբերում – 500,000 դրամ. 3. Փորձագիտական ծառայությունների ձեռքբերում (դասընթացավարություն, բիզնես խորհրդատվություն) – 3,400,000 դրամ. 4. Գրենական պիտույքների ձեռքբերում – 30,000 դրամ. 5. Վերապատրաստման դասընթացների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում – 6,000,000 դրամ. 6. Բիզնես գործունեություն իրականացնելու համար աջակցող սարքերի/գույքի ձեռքբերում (ապրանքների ներմուծում կամ ձեռքբերում տեղական շուկայից) – 6,000,000 դրամ. 7. Ծրագրային գործողություններն իրականացնելու համար ծառայությունների ձեռքբերում– 8,230,872 դրամ. 8. Հոգեբանական աջակցության ծառայությունների ձեռքբերում – 5,860,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում ԻՄ ՔԱՅԼԸ հիմնադրամը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Շիրակի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնադրամի ներքին վերահսկման կանոնակարգով և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

17.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ